ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՐԻՍԻ ԵՎ ԿԱՊԱՆԻ ԹԱՏՐՈՆՆԵՐԸ. ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Մշակութային արժեքների ստեղծումը և տարածումը ռազմավարական խնդիր է ցանկացած պետության համար: Մարզային թատրոնի խնդիրը զուտ ստեղծագործական չէ. մարզային թատրոնն առնչվում է նաև արտաարվեստային հարցերին: Հայաստանի նման փոքր պետության պարագայում դրանք ռազմավարական խնդիրներ են, որոնց գիտակցումը մենք չենք տեսնում պետական կամ համայնքային զարգացման ծրագրերում: Արդյոք որևէ ակնկալիք չունե՞նք մշակութային հաստատություններից:

Բանալի բառեր՝ *Սյունիք, մարզային թատրոն, կրթություն, հասարակություն, ռազմավարություն, մշակութային քաղաքականություն:*

Մշակութային արժեքների ստեղծումը, զարգացումը և տարածումը ռազմավարական խնդիր է ցանկացած պետության համար, հատկապես ազգային պետականություն և քաղաքացիական հասարակություն ձևավորող, առայժմ զարգացող տնտեսությամբ: Յուրաքանչյուր պետություն ինքն է կերտում իր պատմությունը, սակայն պատմությունն իր էջերին ամրագրում է միայն նշանակալի դեպքերն ու իրադարձությունները, դեմքերն ու անունները՝ կարևորելով դրանք մշակույթի տեսանկյունից:

Սյունիքի տարածաշրջանը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, բնության հուշարձաններով, գեղատեսիլ բնությամբ: Սյունիքը հայտնի է հասարակական-քաղաքական, նաև մշակութային գործիչներով: Սույն ուսումնասիրությամբ չենք անդրադառնալու մշակույթի պատմությանը, չենք քննարկելու անցյալի ձեռքբերումներն ու բացթողումները: Մեր նպատակն այլ է:

Մեր նպատակն է դիտարկել, վերհանել և վերլուծել թատերական մշակույթի խնդիրներն այսօրվա Սյունիքի մարզում: Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում (arlis.am) տեղադրված է «Հայաստանի Հանրապետության մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություններին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի N29 արձանագրային որոշումը, որի Հավելված N8-ը՝ ՀՀ Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունն է, փաստաթուղթ, որն ուղենշում է մարզի ապագան. «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը մարզային մակարդակի ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է երկարաժամկետ զարգացման հեռանկարներ ու ուղղություններ՝ հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա» (էջ 9)[1]: Հե-

1 «Հայաստանի Հանրապետության մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություններին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի N29 արձանագրային որոշում, Հավելված 8, էջ 9: Տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114774 Ուշագրավ է, որ նույն Հավելվածը տեղադրված է նաև ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայքում՝ http://www.mtad.

տաքրքիր էր, թե մարզի ռազմավարության մեջ ինչ տեղ է գրավում մշակույթը, հատկապես մեր մասնագիտական հետաքրքրությանից ելնելով՝ Սյունիքի մարզում գործող Գորիսի և Կապանի թատրոնները: Փաստաթղթի երրորդ գլխի՝ «Առկա իրավիճակի վերլուծություն», 3.10. «Սոցիալական ներառում» բաժնում, ամենավերջին՝ 88-րդ կետում կարդում ենք. «ՀՀ Սյունիքի մարզում գործում են 2 թատրոն, 4 թանգարան, 129 գրադարան, 16 արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոցներ, 7 մշակույթի կենտրոն, 110 մշակույթի տուն և ակումբ: Մշակույթի տներում գործում են ժողովրդական ստեղծագործության տարբեր ուղղությունների՝ պարարվեստի, թատերարվեստի, կերպարվեստի, երաժշտարվեստի, գորգագործության, փայտարվեստի և այլ խմբեր: Գեղարվեստական կրթության հաստատություններում սովորում են 1600 աշակերտներ: Թանգարաններ, ցուցասրահներ, համերգասրահներ այցելուների քանակը տարեկան կտրվածքով կազմում է 10000 մարդ: Գրադարանային ծառայություններից օգտվողների թիվը կազմում է ավելի քան 36100 մարդ: Պետական ու ազգային տոներին, ավանդական ծեսերին ու տոնախմբություններին մասնակիցների թիվը տարեկան կազմում է շուրջ 10000 մարդ: Թատերական և տիկնիկային ներկայացումների քանակը կազմում է շուրջ 110-120: Մշակույթի ոլորտում մարզում իրականացվող ծրագրերը պայմանավորված են համայնքներում մշակութային կազմակերպությունների համաչափ տեղաբաշխման, նյութատեխնիկական պայմանների բարելավման, շենքերի հիմնանորոգման, մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովման գերակայություններով, որը կբերի մշակույթի ոլորտի շահառուների թվի ավելացման»[1]: Տրված է նաև երեք գծապատկեր՝ Թատրոն, Թանգարան, Գրադարան, որոնց համար աղբյուր են հանդիսացել Ազգային վիճակագրության ծառայության տվյալները (Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 145-156)[2]: Հարկ ենք համարում նշել, որ վերոնշյալ «Սոցիալական ներառում» բաժնում 88-րդ կետին նախորդում են մարզի առողջապահական համակարգի, աղքատության մակարդակի, ընտանիքների անապահովության գնահատման համակարգի և տնային տնտեսությունների մասին տեղեկությունները: Փաստորեն մշակույթը և մշակութային հաստատությունները՝ թատրոնները, թանգարանները և գրադարանները դիտարկվում են այս համատեքստում: Չենք մեկնաբանում թատրոնին նվիրված գծապատկերը, որտեղ 2011-2015 թվականներին արձանագրված է 50% աճ: Անդրադառնանք Ազգային վիճակագրության ծառայության տվյալներին, որոնք բավականաչափ հետաքրքրական են: Այսպես՝ առաջին դիտարկումը, որն անմիջապես աչքի է ընկնում. Սյունիքում թատրոնների քանակը՝ 2. այդ թվում 2-ը՝ համայնքի ենթակայությամբ: Մինչ այդ մեզ հայտնի էր, որ Գորիսի թատրոնը ՀՀ մշակույթի նախարարության են-

am/hy/razmavarutyunner/, սակայն մեզ հետաքրքրող 88 կետի բովանդակությունը նշված կայքում տեղադրված նույն փաստաթղթի .pdf ձևաչափում տարբերվում է. 88 կետն այն ամփոփված է ընդամենը մեկ նախադասությամբ. «ՀՀ Սյունիքի մարզում գործում են 2 թատրոն, 4 թանգարան, 129 գրադարան»:

Տե՛ս http://www.mtad.am/files/docs/1580.pdf:

1 Նշվ. Հավելված, էջ 32-33:

2 http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf:

թակայության ներքո է. միգուցե փոփոխությու՞ն էր եղել... Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրենից ճշտեցինք, որ թատրոնն իսկապես ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ է, և1 թերևս, վերոնշյալ փաստաթղթում անճշտություն կա: Որպես կանոն հակված ենք վստահելու հրապարակված վիճակագրական տվյալներին, քանի որ դրանց շատ ենք առնչվում մեր ուսումնասիրություններում: Սակայն ուշադրություն գրավեցին նաև այլ վիճակագրական տվյալներ՝ ներկայացումների քանակը և հանդիսատեսի թվաքանակը: Այսպես՝ 2015 թվականին Գորիսի և Կապանի թատրոնները հանդիսատեսին ներկայացել են 118 անգամ (2014-ին՝ 93 ներկայացում), սպասարկել 30.6 հազ. հանդիսատես (2014-ին՝ 19.1 հազ. հանդիսատես), այսինքն՝ յուրաքանչյուր ներկայացման հանդիսատեսի միջին թիվը 259-ն է (2014-ին՝ 206 հանդիսատես): Սա աննախադեպ, եթե ուզում եք, անհավատալի թիվ է, եթե հաշվի առնենք, որ նույն ցուցանիշը՝ յուրաքանչյուր ներկայացման հանդիսատեսի միջին թիվը, Երևան քաղաքում կազմում է ընդամենը 174 մարդ (2014-ին՝ 177 հանդիսատես)[1]:

Անշուշտ, վերջին մի քանի տարիների ընթացքում Կապանի և Գորիսի թատրոնները գործում են ավելի վստահ, ավելի կանոնավոր: Թատրոններ են եկել երիտասարդներ, ովքեր նվիրված են իրենց գործին, ազնիվ են, ունեն մասնագիտական բարձր որակավորում: Ոչ վաղ անցյալի պատմությունից հայտնի է, որ շատ երիտասարդ մասնագետներ իրենց գործունեությունը սկսել են հենց մարզային թատրոններում: Եվ եթե վստահում ենք քանակական տվյալներին, ապա պետք է արձանագրենք, որ Սյունիքի մարզում 2011-2015 թվականներին թատրոն հաճախողների թիվն ավելացել է 50%-ով: Եթե իրոք այդպես է, ուրեմն փառք ու պատիվ նրանց, ովքեր մասնակից են եղել այս գործընթացին: Բայց արդյոք ճշմարի՞տ է...

2009 թվականին ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ մեր կողմից իրականացվել է ուսումնասիրություն՝ թատրոնների կառավարման սկզբունքների վերաբերյալ: Հետազոտության արդյունքները հրապարակվել են ԵԹԿՊԻ-ի «Հանդես» գիտական հոդվածների ժողովածուում[2]: Ուսումնասիրության շրջանակում այցելել էինք Երևան, Գյումրի, Վանաձոր, Արտաշատ, նաև Գորիս և Կապան քաղաքների թատրոններ, ուսումնասիրվել էին ոչ ֆինանսական հաշվետվությունները, այլ վիճակագրական տվյալներ պարունակող փաստաթղթեր, իրականացվել էին փորձագիտական հարցազրույցներ, քննարկումներ՝ թատերախմբերի անդամների մասնակցությամբ: 2009 թվականին Գորիսում և Կապանում հետազոտող խումբը բոլորովին այլ պատկեր էր արձանագրել թե՛ ստեղծագործական և թե՛ կազմակերպական հարցերում: Չենք կրկնի արդեն հրապարակված ուսումնասիրության արդյունքները՝ քանակական տվյալների վերլուծությունը, քննարկումների և փորձագիտական հարցազրույցների ամփոփումները, սակայն մեջբերենք մեկ դրվագ, որը տարիներ անց էլ մեզ հանգիստ չի տալիս: Երբ հետազոտող խումբը գործուղվել էր

1 Նույն տեղում, էջ 145-146:

2 Տե՛ս **Հարությունյան Ա., Գևորգյան Վ.,** Թատրոնների կառավարման սկզբունքների ուսումնասիրում, ԵԹԿՊԻ-ի «Հանդես» գիտական հոդվածների ժողովածու, N10, Երևան, 2000, էջ 11-34: http://ysitc.am/science/view/7:

Գորիս և փորձում էր գտնել թատրոնի շենքը, օգնության դիմեց մի քանի տեղացիների: «Երիտասարդ մի տղա պատասխանեց, որ Գորիսում թատրոն չկա: Մի օրիորդ էլ մեզ ճանապարհ ցույց տվեց, սակայն պարզվեց՝ հակառակ ուղղությամբ: Միջին տարիքի մի կնոջ դիմեցինք, նա օգնեց. թատրոնում էր աշխատում: Պարզվեց, որ մեր հարցումն անմիջապես թատրոնի շենքի հարևանությամբ ենք անում, սակայն այն, որ թատրոնի շենքի մոտ ենք կանգնած, անհնարին էր գուշակել. ոչինչ դրա մասին չէր հուշում: Միայն ծառայողական մուտքի վրա վերջապես գտանք ցուցանակ. այստեղ է Գորիսի պետական թատրոնը: <...>

Թատրոնն այս քաղաքի (Կապանի) համար անհրաժեշտ երևույթ է, շատերի կողմից սպասված, ոմանց կողմից, անշուշտ, անտեսվող, բայց ընդհանուր առմամբ՝ ցանկալի: Թատերական երեկոն, որին ներկա գտնվեցինք Կապանում, տոն էր Կապանի հանդիսատեսի համար»[1]:

Թատերական գործունեության կազմակերպումը բարդ է անգամ մեծ համայնքներում, ուստի գիտակցում ենք, թե ինչպիսի պայմաններում են ձևավորվել թատրոնները փոքրաթիվ բնակչություն ունեցող քաղաքներում, ինչ ստեղծագործական և կազմակերպական խնդիրներ են եղել, ինչպես է հասարակությունն արձագանքել այս գործընթացներին: «XIX դարի 80-ական թվականների կեսերին գավառակենտրոն Գորիսում հիմք դրվեց թատերական ներկայացումներին: Թատրոնը գավառակենտրոնի կյանքն աշխուժացնող առաջին հաստատությունն էր», - գրում է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Ստեփանյանը[2]: Անվիճելի է, թատրոնը ստեղծում է մշակութային միջավայր՝ իր տանիքի տակ, իր գաղափարի շուրջ հավաքելով և համախմբելով հասարակության բոլոր շերտերին: Դրա ապացույցն է թատրոնի պատմությունը:

Ի՞նչ հետևանքներ այսօր կարող են լինել մշակութային կյանքի պասիվ վիճակի կամ բացակայության հետևանքով: Թվում է՝ XXI դարում, երբ բոլորս մեր գրպաններում կարող ենք ունենալ համաշխարհային գրականությունը, կինեմատրոգրաֆը, օրվա լրահոսն ու մամուլը, ընկերների և գործընկերների հետ հաղորդակցումը, անձնական կամ աշխատանքային ծրագրերն ու փաստաթղթերը, ուրեմն մենք տիրապետում ենք տեղեկատվական ամբողջ հոսքին և կարող ենք կառավարել այն: Միայն թվում է... Եթե մշակութային երևույթների, հատկապես արվեստի ու գրականության ընկալումը տեղափոխում ենք թվային տեխնոլոգիաների ոլորտ, ապա կորցնում ենք դրանց գաղափարա-փիլիսոփայական արժեքը, արվեստի ստեղծագործությունների գեղագիտությունն ընկալելու և մտածել սովորելու մարդու համար կարևոր հատկությունը: Թատրոնը գրպանդ չես դնի. թատրոնն ա՛յս պահին բեմահարթակի վրա գործող դերասանն է, շփումը թատերասրահում ներկաների հետ, և ո՛չ դրա տեսագրությունը, թատրոնը դերասանի կենդանի վարքագիծն է և հանդիսատեսի ապրումներն ու մտքերը:

1 Նշվ. աշխ., էջ 20:

2 **Ստեփանյան Գ.**, Դրվագներ Գորիս քաղաքի պատմության (1870-1917). մաս Ա, ըստ http://www.sarc.am/2016/06/գորիսի-թատրոնի-սկզբնավորման-պատմութ/:

«Ի՞նչ է թատրոնը, խա՞ղ, հասարակական կենցաղի ձևերից մե՞կը, թե՞ ազատ արվեստ, կամ այս ամենը միատեղ, որպես իրականության կենդանի խորհրդակերպումը», - գրում է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հովհաննիսյանն իր «Թատրոն և թատերախոսություն» հոդվածների հավաքածուի նախաբանում[1]: Սյունիքի մարզում գտնվող Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան և Գորիսի Վ.Վաղարշյանի անվան թատրոնները գործում են, ֆինանսավորվում պետական կամ համայնքային բյուջեից: Նշված թատրոնների պատասխանատուներից ճշտեցինք թատրոններում այսօր առկա խաղացանկը: Պարզվեց, որ խաղացանկերում կան բեմադրություններ ինչպես ազգային, այնպես էլ թարգմանական ստեղծագործությունների հիման վրա: Ներկայացումները նախատեսված են ինչպես մանուկ հանդիսատեսի, այնպես էլ «16+» տարիքային խմբի համար: Թատրոններում բեմադրություններ են իրականացրել և իրականացնում թե՛ անվանի և թե՛ սկսնակ երիտասարդ մասնագետներ: Դերասանական կազմում կար սերնդափոխության խնդիր, սակայն վերջին տարիներին, շնորհիվ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, մասնավորապես ԵԹԿՊԻ-ի Գորիսի մասնաճյուղի, այս հարցն էլ լուծում է ստանում: Փաստորեն թատրոնները փորձում են իրականացնել իրենց առաքելությունը, ստեղծագործում են, ջանք են գործադրում: Իսկ հանրությու՞նը... Հանրությունը պատասխանատու է, թե ինչպիսին կլինի թատրոնը, ինչ գեղագիտություն կունենա կամ կլինի՞ թատրոն, թե՞ ոչ: «Թատրոնն իրականանում է ոչ թե բեմում, այլ յուրաքանչյուր հանդիսականի հոգում: Բացի թատրոնի պատասխանատվությունից՝ գոյություն ունի հանդիսատեսի պատասխանատվություն», - գրում է Մ.Վոլոշինը[2]: Անհնար է չհամաձայնել այս մտքին: Եվ եթե պետական կամ համայնքային ռազմավարության մեջ թատրոնը դիտարկվում է միայն որպես «սոցիալական ներառման» գործիք, ապա մշակութային արժեքներ ստեղծելու և հանրությանը փոխանցելու նրա հիմնական խնդիրը ստորադասվում է, դառնում երկրորդական:

Մայրաքաղաքից 235 կմ հեռավորության վրա գտնվող Գորիս քաղաքում, Սյունիքի մարզում, որի սահմանի երկարությունը 472 կմ է, թատերական կրթության կազմակերպումը՝ ԵԹԿՊԻ-ի Գորիսի մասնաճյուղի հիմնադրումը, ուներ քաղաքական նշանակություն. սա չարձանագրելը միամտություն կլինի: Եվ եթե Սյունիքի մշակութային, թատերական կյանքում ստեղծագործական ակտիվություն է նկատվում, ապա այս գործընթացում նշանակալի ներդրում ունի ԵԹԿՊԻ-ի Գորիսի մասնաճյուղը՝ ի դեմս մասնաճյուղի արդեն նախկին տնօրեն Շանթ Հովհաննիսյանի, ով այսօր Գորիսի պետական թատրոնն է ղեկավարում: Ուսումնական գործընթացի կազմակերպիչների համար պարզ է, թե ինչ է նշանակում ունենալ փոքրաթիվ ուսանողական համակազմ, աշխատել երեք տարբեր քաղաքներում՝ Գորիսում, Կապանում, նաև Շուշիում:

Կրթական, մշակութային գործունեությունն ինքնանպատակ չի կարող լինել: Մարզային թատրոնի խնդիրը զուտ ստեղծագործական խնդիր չէ. մարզային թատրոնն արտաարվեստային հարցերի հետ էլ է առնչվում, մասնավորա-

1 **Հովհաննիսյան Հ.**, Թատրոն և թատերախոսություն, Ե., 2004, էջ 5:
2 **Волошин М.**, Лики творчества, Л., «Наука», 1988, с. 358.

պես՝ Հայաստանի նման փոքր պետության պարագայում դրանք ռազմավարական խնդիրներ են, որոնց գիտակցումը մենք չենք տեսնում պետական կամ համայնքային զարգացման ծրագրերում: Արդյոք որևէ ակնկալիք չունե՞նք այս հաստատություններից:

Մերժելով տարիների ընթացքում ձևավորված ազգային արժեքները՝ կմիաձուլվենք տարբեր կողմերից փչող կեղծ և վտանգավոր հոսանքներին, չարժեվորելով այն, ինչ ունենք և կարող ենք զարգացնել, կկորցնենք մեր ազգային դիմագիծը: Հայ եկեղեցին, հայոց լեզուն և հայ մարդու ստեղծագործ միտքը. սրանք են այն արժեքները, որոնք հիմքն ու ապագան են հայոց աշխարհի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Ա., Գևորգյան Վ., Թատրոնների կառավարման սկզբունքների ուսումնասիրում, ԵԹԿՊԻ-ի «Հանդես» գիտական հոդվածների ժողովածու, N10, Երևան, 2000:
2. Հովհաննիսյան Հ., Թատրոն և թատերախոսություն, Երևան, 2004:
3. Ստեփանյան Գ., Դրվագներ Գորիս քաղաքի պատմության (1870-1917). մաս Ա, ըստ http://www.sarc.am/2016/06/գորիսի-թատրոնի-սկզբնավորման-պատմութ/
4. Волошин М., Лики творчества, Л., «Наука», 1988.

✓ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114774
✓ http://www.mtad.am/files/docs/1580.pdf
✓ http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf

ТЕАТРЫ ГОРИСА И КАПАНА: ТЕАТРАЛЬНАЯ КУЛЬТУРА В СЮНИКСКОМ РЕГИОНЕ - АРМЕН АРУТЮНЯН - Создание, развитие и распространение культурных ценностей является стратегической задачей любого государства. Сюникский регион богат культурно-историческим наследием. Сюник известен общественно-политическими, культурными деятелями.

Какие задачи очерчиваются в стратегии развития Сюникского региона сегодня? Как оценивается задача развития культурных ценностей, в частности – в театральной сфере? В марзе два театра – Капанский драматический театр им. Ал.Ширванзаде и Горисский государственный театр им. В.Вагаршяна. Театры имеют свой репертуар, наряду со старшим поколением здесь работают молодые специалисты. В Горисе – филиал Ереванского государственного института театра и кино, где получают высшее образование будущие актеры. Но влияют ли театры на культурную жизнь в марзе, каков общественный резонанс? Какое место уделяется культурному развитию региона в стратегии развития марза в целом?

Культурная деятельность не может быть самоцелью! Задачи культурной политики должны быть ясно и четко обозначены, особенно для региона, находящегося за сотни километров от столицы и имеющего протяженную государственную границу.

Армянская церковь, армянский язык и творческая мысль армянсого народа – основополагающие культурные ценности, на которых можно строить будущее Армении.

Ключевые слова: Сюник, областной театр, образование, общество, стратегия, культурная политика.

THE THEATRES OF GORIS AND KAPAN, THE ATRICAL CULTURE IN SYUNIK REGION - ARMEN HARUTYUNYAN - The creation and dissemination of cultural values is a strategic issue for any country. The Syunik region is rich with historical and cultural memorials, monuments of nature, picturesque nature. Syunik is famous for its socio-political and cultural figures.

The Kapan Theatre named after Al.Shirvanzade and Goris Theatre named after V.Vagharshyan in Syunik Region are trying to accomplish their mission by creating. What about the community? The community is responsible for the theatre, what kind of aesthetics it will have and will there be a theatre or not? As there´s an active cultural theatrical life, the reason is the significant contribution of the Goris branch of YSITC.

Educational, cultural activity may not be self-contained. The objective of the regional theatre is not only the creative task: the regional theatre also deals with issues not connected to art. In case of a small country like Armenia, the issues are strategic-they are challenges of the cultural policy. We do not notice the awareness of these challengesin the state or regional development programs.

The Armenian church, Armenian language and the creative mind of the Armenian people: these are the cultural values which serve as a foundation and future for the Armenian world.

Key words: Syunik, regional theatre, education, community, strategy, culture policy.